

ԱՄՐՏՈԼՈՒՑ ՄԻՆՉ ՍԿԻՒՏԱՐ – ԳՈՒՄ-ԳԱԲՈՒ

Բարդ ու հոկասական պատմական իրադարձութիւններով հարուստ, ազգային-եկեղեցական կեանքի գծուարին և պատմխանառութիւն մի ժամանակաշրջանում՝ (Ժ. գարի սկզբին) է ծնուռ Սկիւտորի գպրոցը, որ Ամրտոլու գպրեվանքի գրեթէ ուղղոցի շարունակութիւնն ու ժառանգորդն է, Պատմական իրատես շրջակացութեան, ազգի ու ժամանակի թելադրած կենսական պահանջների յստակ գիտակցութեան և Հայ Եկեղեցու հոգեորհաստրական ու գիտումշակութային դերի ճշգրիտ գնահատման արդիւնք է նրա հիմնադրութիւնը՝ մանաւանդ Կ. Պոլոս մէջ։

Ոչ շատ առաջ, Ժ. գարի յատկապէս երկրորդ կէսին, մեծ տեղաշարժեր էին կատարում Հայ իրականութեանը այս կամ այն կերպ առնչուող երկրներում՝ լինի՝ Արեմտեան Եւրոպայի, Լինաստանի, Ռուսաստանի, Պարսկաստանի, լինի՝ բուն՝ Թուրքիայի տարածքի վրայ։

Գտղութարարական նուաճումները քաղաքական, տնտեսական, առեւտրական և ընկերային-կրօնական վիթխարի խնդիրներ էին տաշջադրում Եւրոպայի տիրակալ պետութիւններին։ Նոր խաչակրաց արշաւանքներ էին ծրագրում (Հուգովիկիոս Ժ. և ուրիշներ) դէպի Արևելք, Ժանաւանդ երր Թուրքիան շարունակար վարուում էր իր նուաճած Եւրոպական տարածութիւններից և ամփոփուում աւելի նեղ պատեանի մէջ։ Օգտուելով պատմա-քաղաքական այս իրավիճակից, Թուրքիայի տիրակալութեան տակ հեծող ժողովուրդները, այդ թւում և Հայերը, դիմում են ազատագրական պայքարի, Դործնական և Ետաղական քայլեր և առնւռում։ Մահաեսի Մուրատն ու Յովհաննէս Արքեաթիկոպոս (Պատրիարք Կ. Պոլոս) և կաթողիկոս Աղթամարի (Թուրքիան) այս առնչութեամբ եղան Եւրոպական պալատներում, Լուգովիկոս Ժ. ի

ևս բանակցութիւններ վարեցին Վէրսայ-լում կաթողիկոսներ Խաչատուր Գողատացին և Եղիազար Այնթապցին ոչ միայն իրախուսում էին այս գործը, այլև տնամբը անմիջական շփման ու գործարքի մէջ էին մտնում Եւրոպական պետական ներկայացուցիչների՝ դեսպանների և Հռոմէ Եկեղեցու սպասաւորների հետ ինչքան էլ անյօւսալի ու միամիտ թուան Արեմտահայութեան ազատագրական շարժման նման քայլերը, այդուհանդերձ, գրանք սրոշակի նշանակութիւն ունեցան Հայ ժողովրդի յետագայ ազգային-եկեղեցական կեանքում։ Արեմտահայ ազատագրական շարժումը գույքական լոյն ժաւալ ունէր, ընդգրկում էր ինչպէս հայկական գաւառների զանգուտներին, որոնց գրութիւնն անտանելի էր սուլթանական բռնապետական կարգերում, այնպէս էլ հասարակական միւս խաւերին, յատկապէս արեմտահայ պուրժուազիայի և հոգեւորականութեան առաջադիմական տարրերին, իրաւացիօրէն եղրակացրել է Յ. Անասեանը⁽¹⁾։ Ի դէպ, շարունակում է նա այսպէս։ «Հայկական ազատագրական պատմութեան մէջ արեմտահայերի սոյն շարժումն առաջինն է, որը հիմնում է զիրուած ապսամբութեան գաղաքարի վրայ, որպիսին աւելի ուշ է երեան գալիս Արևելեան Հայաստանում՝ Խորայէլ Օրիի ծրագրով»⁽²⁾։ Յայտնի են Ժ. գարի երկրորդ և Ժ. գարի առաջին կէսին Արևելեան Հայաստանում ծաւալուած Հայ ազատագրական շարժման մանրամասները, յայտնի է նաև Հոյ Եկեղեցու մեծաւորների կարեսը բաժինը այդ գործում։

Այս ամէնը, հասկանալի է, իր անդրադարձ ազգեցութիւնը պիտի ունենար Հայ ժողովրդի գերիշխող խաւերի ազգային-հասարակական մտածողութեան և ներքին կեանքի վրայ առհասարակ։ Հայ Եկեղեցու որևէ գիտակից իշխանաւոր չէր կարող իր գործունէութեամբ առաւել ևս

(1) Յ. Անասեան, Ժ. գարի ազատագրական շարժումներն Արևելեան Հայաստանում, Երևան, 1861, էջ 273։

(2) Նոյն աելում, էջ 275-276։

շնորհածէլ աղքային ինքնագիտակցութեան ու մտաւոր կեանքի խթանմանը, կային ժամանակաշրջանը յատկանչող նուի այլ թելոցիր մի շարք պատճառներ, ուրոնց թւում կաթուլիկ Եկեղեցու ծաւալապաշտական այլ շրջանում էլ աւելի աշխատացող նկրառաւմները Եւրոպական պետականների ուղղակի աշակցութեամբ ու միջամտաւթեամբ ինչպէս յայտնի է, Հայ ժողովուրդը թիրախի բռնուած էր շատ վազուց, իսկ այժմ՝ ինիս որշակի ու ծրագրուած՝ Պարսկաստանից մինչ Թիրքիւ, Կ. Պոլիս, Ղրիմ, Լեհաստան և Նշուած գորաշրջանը բնորոշուած է նաև գիտամշակութային, Ընդհանրապէս մտաւոր կեանքի ակնառու վերելքով, որի թէկուզ հեռաւոր Յոլքերը չէին կարող չհասնել Եւրոպայից մինչև Հայկական առաջատար ուլորտները, մանաւոնդ Կ. Պոլիս, իրեն միջազգային խաչուցիներին վրայ ընկած և Եւրոպայի այնքան մօտիկ ու Եւրոպացիներին այնքան շանագրգուղ բնակավայր։

Այս փոփոխութիւնների շրջապայոյտից երբեք գուրս մնալ չէր կարող Կ. Պոլոսյ Հայոց Պատրիարքարտանը, որը յատիկապէս այդ շրջանում գործել էր ողջ արեւտահայութեան ազգային, եկեղեցու վարչական ու հոգևոր-կրօնական կենացրոնց, Անհրաժեշտ է այս առամավ մատնանշել յատիկապէս այն հետեղողական ու ժաւալուն աշխատանքը, որը Փ. Քարի սկզբին ի գործ գրուեց Յոլքաննէս Կոլոտ Պատրիարքի և իր գործակիցների կողմից, Կազմուկերպչական, բարենորդչառական, լուսաւորական, մշակութային, գիտա-թարգմանչական ու կրթական շատ կարեար գեր ու նշանակութիւն ունեցած այդ աշխատանքը։

Հայ ժողովուրդի աղքային-եկեղեցական յայուրը, խոհերն ու ծրագրերը իրենց մէջ խոացնող եկեղեցական բարձրագոյն երեք աթոռները՝ Մայր Աթոռը Ս. Էջմիածնուած, Երուսաղէմի և Կ. Պոլոսյ Պատրիարքութիւնները միանդամայն բարոյական լքուած ու քայլայուած վիճուկից վերակենդանացան, ոյժ ու հեղինակութիւն ուստան յատկապէս Ամրաւոյւ երեք աշակերտակից սաների անձնուեր

ջանքերի չնորհիւ Պատմական չափազակց մէծ բրազութիւն էր սաւ։

Ըստհանուր պատմա-քաղաքական և պատմա-կեկեղեցական նման պայմաններում չէր կարելի լտեսնել մտաւոր-գոտ զափարական կեանքի բարեկաման կենական անհրաժեշտութիւնը, Դրու համար նախ և առաջ գոտզափարի սերմանացները, բանիմաց ու ազգանուէր գործիւներ են պէտք, առեւար գլավում զարգացնել հայրենական անհրաժեշտութիւնը կարելի սանի համար նարագան համոզմունք էր, աւաթէ ինչու նու չուշացրեց նոր զարոցը հրմանութիւնը Սկիւարուամ։

Ցաւալի է, որ այս դպրոցի մասին ևս պատմական մանրամածունութիւններ մնացն են հազորդուած։ Ո՞չ սկզբնազրիւթիւններում, ո՞չ էլ յետագոյ ուսուումնաիրուս թիւնների մէջ տյս առնչութեամբ բառ աւրար փաստադրական նիթ չի պահպանուել։ Անուղղակի և սակա տեղիկուս թիւններից կարելի է հետեւալ ամփոփ եզրակացնութիւններին յանցիր։

Դպրոցն իր գործունիւնութիւնն սկսիլ է 1719ին, Սկիւարի մէջ Երուսաղէմի վանքին պատկանող մի չենցում, որը սրբէ իջնանատուն էր ծառայուած Երուսալէմից և իջմիածնից ժամանակակից հակառակութիւն ունեցած թիւններին։

Յօվհաննէս Կոլոսի գրիտուորութեամբ այսեղ ուսուցչւութիւն են արել Պոլսկա Խարբիրդցին, Պատար Սկրոստացին (Խմուճայ), ապա՛ գրոցի անդրանիկ սաներից՝ Սակոր Նալեան (Յօվհաննէս Կոլոսի յատոյ՝ Պատրիարք Կ. Պոլոսյ) և ուսրիշներ։

Ուսուումնական ծրագրի մասին դժուար է սոսոյդ խօսք ասել Նկատի ունենալով երթուղիի և ուսուցչապետ Սովէ, Կոլոսի Ամրաւոյւ գրոցի սան լինելը, ուսուուցիչների պատրաստութեան մասնագիտական հակուսները և մատենադրական ֆասուանդութեան ժամանային պատկաններութիւնն ու գիտական-իմաստասիրական մակարդակը, կարելի է համոզուած լինել, որ այն ընդդրկել է բազմազան նիւթերը։

կրօնա - սատուածաբանական, մեկնաբանական և Ըներքինց գիտութիւնների վերաբերեալ աւանդական գոտուանութութիւններին զուգահեռ ուսուցուել են նույն շղթիտ, արտաքինց գիտութիւնները Այդ ժամանակաշրջանում և Եւրոպային այդքան մօտիկ գտնուող նմուն միջավայրում այլ կերպ չէր էլ կարող լինել:

Օտար լեզուների իմացութեան աէք այնպիսի մի հմտութարգմանչի, ինչպիսին էր Գուկաս Խորեբռդցին, ներկայութիւնը այս գպրոցում իրրե ուսուցիչ, հաւաստում է, որ այսակ ուսուցուել են յունարէն ու լատիներէն, հաւանարար նաև՝ իտալերէն ու ֆրանսէրէն։ Օտար ժամանագրութեան յուշաբանների թարգմանութեան այնքան եռանդադիմին հետաքրոջուղի Սովորաննէս կոլոտը պիտի ուզենար, որ իր աշակերտները ևս ի գիճակի լինէին ձեռնամախի լինելու թարգմանչական աշխատանքի, ուստի, պէտք է սովորէին օտար լեզուներ և սովորել էին։

Աշակերտութիւնն թիւը մնէ չէ եղած,
բայց երբ, ըստ պահպանուած մի ցուցան-
կի, առնաւազն 27 եկեղեցականներ է տը-
ւել համեմտատարար կարճ ժամանակուայ-
քնթացքում, նշանակում է այնքան էլ
թիւ չեն եղել ուսանողները, և կրթական-
մանկավարժական բաւականին աշխուժ ու
տարրունակ աշխատանք է ներդրուել
այս դպրոցում:

Հստ որում նուազ գնահատելի, ար-
էքաւոր ու արդինաւէտ չեն դպրոցի
համար ու դպրոցին աշընթեր ծաւալուած
մատենագրական, գրական, թարգմանչա-
կան ու հրատասրակչական աշխատանքները

Ամէն ջանքու կարելիս թիւն գործի դրուեցին նախ և տուաջ ձեռագիր մատեանների մի հարուստ հաւաքածոյ ստեղծելու համար Զանազան վանքերի, բայց տառակելաբար Ամբաղը և Մշոյ Ս. Կառ բագեսի վանքի ձեռագրական ժողովածաւները խնամքով փոխադրուեցին Ակիւտարի Այս խոհեմ քայլը մատենագրական այլառանքների լայն հնարաւորութիւններ էր ընձեռում ուսուցիչների և աշակերտների համար, առիթ էր տալիս պահպանելու մեր հնագոյն գրչագրերը, կտառքելու նորանոր ընդորինակաւթիւններ.

զարգացնելու գրչութեան և ծաղկաբարարութեան տոհմիկ արուեստները, Մեր բալոր միջնադարեան գլորցներին առընթեր ստեղծուած ձեռագրատների օրինակով ու նրանց նման գրտկան, գիտական, պատմական ու մշակութային շատ կարեւոր գեր կատարեց այս նորագուզմ ժամանակաբանը, որ յետպայում փոխադրեւեց, ըստ երեսոյթին գլորցի հետ միաժամանակ, Գումը-Գարու, Պատրիարքարանի մօս, Տեղափոխուած ձեռագրերը թէ 360 հատ են հնագույն սակայն, կարծում ենք, իրաւացի է Բարքէն Աթոռակից Կաթողիկոսը, երբ դիտել է տալիս, թէ՝ «ԱՄասենադարանի ձեռագիրներէն մէկուն վրայ կը կարդացուի 601 թիւը, որ ըստ մեզ ցոյց կու տայ կոլոտի մատհանադարանին ձեռագիրներուն թուահամարը, և որ հաւանաբար ունեցած է իր շարունակութիւնը ...»։ Քիչ չափազանցութիւն է, անշոշտ, երբ, շորունակելով իր դիտողութիւնը, ենթադրում է. «Ո՛գիտէ, թերես, մինչև հազարաւոր թիւներ ... ձեռագիրներուն»⁽³⁾։

Ըսդգծելի են ի մասնաւորի թարգման-
նական գժուարին ու մեծածավալ ձևոնար-
կումները։ Ոչ միայն լեզուողի իտական
հմտալիք իմացութիւն և աստուծաբառ-
նական, իմաստասիրական, Ս. Գրակոն,
դիտական ու պատմա-գիտական լայն զար-
գացում, այլև կազմակերպչական ու նիւթ-
թական շատ մեծ զոհազութիւններ էին
պահանջում դրանք իրենց լրումին հաս-
ցնելու համար։ Կար նուև շատ առջ լուրջ
մի հանգամանք. հարկ էր այդ գերազան-
ցապէս կաթուիկ հեղինակների կրկերի
թարգմանութեան անհրաժեշտութիւնն ու
օգատակարութիւնը կասկածի տակ չթողնել
յուս ազգային - եկաղեցական աւանդու-
պատշ նախանձախնդրութեան։

Թարգմանութիւններ թելաղդրող և հովանաւորող Յովկաննէն Կոլոստ Պատրիարքը ինքը յատառկ հաշիւ տալիս էր իրեն նաեւ այս առօսով, որպէսզի կաթոլիկութեան նկատմամբ իր գիրքորոշումը տեւելի և չդատափառուի և իրապէս էլ չլցանգուի

Հայ եկեղեցու յատկապէս այդ օրերի գիտակցուկան՝ գողափարական տառանց ուղեւ ի խիստ նահանջած կեանքը: Ուշագրաւչ նրա հետևեալ հարկադիր բացատրականը Սկօթոսի զԱստուածաբանութեան թարգմանութեան տոթիւ: «Աս է ամենունակ գանձարան և ամենաբարի մտառան և ամենայն մրգաց և ծաղկանց մնանարան, թէպէս և ի մէջ ծաղկանց զեղին ունի բուսուցեալ, և ի մէջ մրգաց՝ զոմանս նեխեալ ... բացէ տէր Յիսուս զաշս սիրելի ապին իմոյ ճանաչել զշտր և զբարի ... Պարզէ, ուրիմ, դիմելով այդդան պատասխանառուու ձեռնարկի, նա վստահ էր, որ Հայ հաւատացեաները ճիշդ ընթարութիւն կը կատարեն և, ընդուռնելով զգբարինս, կ'անտեսեն չչարը»⁽⁴⁾: Այսու Հայ ժողովուրդը անմասն չէր մնար Եւրոպայի նաև գիտութեան և իմաստասիրութեան մարգերում՝ իրագործած նըւաճումներից, ինչ որ վերոյիշեալ թարգմանական բոլոր ձեռնարկումների թիրա հիմնական նպատակն էր: Ոչ միայն Հայ եկեղեցու և եկեղեցականների աստուածաբանական ու կրօնագիտական մտահորիցոնը ընդլայնելու, այլև Հայ ժողովաւրդը լուսաւորելու և ուսման ու գիտութեան վերստին մերձեցնելու մտահոգութիւնն էր յիշեալ ձեռնարկումները զսպանակողը: Այս շատ յստակ նկատելի է Յովհաննէս Կոլոստի իսկ հեղինակած այն բոլոր պատմական-մատենագիտական յիշատակորանների մէջ, որոնք զիտեղուուծ են թարգմանուող որոշ երկերի վերջուած:

Վերջիններին անունները թէկ մեծ թիւ չեն կազմում, բայց ծաւալով չափազանց ընդարձակ են, իւրաքանչիւրը միջին հաշուով կազմում է 700-800 մեծադիր էլ:

Միայն անմիջականորէն Յովհաննէս Կոլոստի և նրա գործակիցների, ապա՝ աշշակերտների թելագրանքով ու աջակցութեամբ կատարուուծ թարգմանութիւնների ցանկը, մօտաւոր ճշգութեամբ, հետեւեալն է ըստ բուն իսկ ձեռագրական ստոյդ վկայութիւնների:

(4) Բ. Կիւէսէրեան, նշուած այլատութիւնը, էջ 106:

1. — Կուռնելիոս Ալոփիսայ, «Մելինուրիւն Յայնուրեան»: «Ի վնէժում, յամի տեառն թիջ (1700), թարգմանեցեալ եղեւ ի Դուկասու Վարդապետէ Խարբերթացւոյ, խնդրանօր եւ ծախսիք Պատրիարքի Բիւզանդիոյ Տեառն Յովհաննիսի աստուածաբանութեան վարդապետի Բաղդշեցւոյ»⁽⁵⁾:

2. — Յովիսաննէս Ասսենիսինցի, «Գիրէ օրինակոց եւ նիմանուրեանց»: «Գլխովին պատճառ սուրբ զրբոյս թարգմանութեան Յօհաննէս բանասէր Պատրիարք Պօլսոյ մեծի: Թարգմանեցեալ ի Դուկասու Վարդապետէ Խարբերթացւոյ, ի լատինականէ լեզուէ ի հայկական բարբառ, ի վնչժում քաղաքի, յամի Տեառն 1718 ...»⁽⁶⁾:

3. — Գուլիիմոս Փեփին, «Լուսառուքին խոսովանուրեան»: «... եւ իր զիշտու Պօլսոյ ... զՅովհաննէս բանի պաշտօնեայս, որ բազում ջանացութեամբ եւ յոլով արդեամբք, մինորդութեամբ որդեկի իմոյ Սակորայ ... ետու թարգմանել ... վարդապետին Դուկասու աստուածաբանի առան հմտավարժի լեզուացնլաթինացւոց...: Արդ եղեւ թարգմանութիւն սորին ի թիվն Փրկչի 1725 ... կոստանդնուպօլիս ...»⁽⁷⁾:

4. — Սկորոս, զԱստուածաբանութիւն-Ալրդ, ես՝ յետին ի բանասիրաց ... տեսուչ մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ Յօհաննէս բանի պաշտօնեայս, գոլով քաղաքաւ բաղիշեցի ... ետու թարգմանել մեծաւ սիրով ...: եւ սոյն զրբոյս «Աստուածաբառանութեան» եղեւ թարգմանի Խարբերդցի Դուկաս յորնահաննար վարդապետն ...: Արդ, եղեւ թարգմանութիւն ... Ռէձէ (1729), ի բաղաքն Կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետ եկեղեցւոյն որ յիւսկիւտար ...»⁽⁸⁾:

(5) Խորար Արենպա. Պաղարեան, «Մայր Յուցակ Զեւադրաց Մերց Յակուբեանց», Հատուք Ա., Երևանի էջ, 1966, էջ 193:

(6) Նոյն տեղում, էջ 391: Հօստ տպագրուածի, այս երկի թարգմանութիւնը կատարեւել է: Ըստ մասին ի վնէժ և ըստ մասին ի Կոստանդնուպօլիս ...: ան՛ թարգէն Աթոռակից կաթոլիկոս, Յանցակ Զեւադրաց Հաւաթիոյ Աղդային Մատենագրանի Հայոց, Անթիւմա, 1961, էջ 184:

(7) Նշուած աշխատաւթիւնը, էջ 314-315:

(8) Բարգէն Արուակից նարախիս, նշուած աշխատաւթիւնը, էջ 16-18:

5. — Պօլոս Անեներոյ, «Ներկրումն ապահովովիք»։ «Թարգմանեցաւ ... ի լիտալական լեզուէ ի հայկական բարբառ գոյիք եւ օժանդակութեամբ ... պատրիարքին Կոստանդինուպոլսոյ Հայոց [Յովհաննու, Փ. Ա.] ... ի Ղուկասու վարդապետէ Խարբերդացւոյ ի յօդուտ Հայկազեան ազգին ... յամի 1732 ...»⁽⁹⁾։

6. — Հերոնիմոս Լատուկրո, «Անտառ այլբանուրեան»։ «... մեծաւ խնդրանոր եւ բազմօր ծախիւք թարգմանեցնեցեալ ... պատրիարքին Տեառն Յոհաննու ... Բաղիշեցւոյ ի փառաւ մեծագոյնս Աստուծոյ եւ յօդուտ աշակերտաց եղեղոց մերոյս դառնասան եւ այլոց ընթերցասիրաց անձանց։ Թարգմանեցեալ ի լաթինական լեզուէ ի բարբառ հայկական ի Ղուկասու վարդապետէ Խարբերդացւոյ, ի Կոստանդինուպոլիս քաղաքի, յամի Տեառն 1733, եւ ըստ հայոց Ծանրին»⁽¹⁰⁾։

7. — Թեոդորոս Ճեննաւրիոս, «Խարբերինք աշխարհի» (Ա և Բ հատոր)։ «Գիրք այս ... են երկու հատորը, զմինն աւարտեցի Աստուծով, որ է Առաջին Հատոր, եւ զմիւնն թարգմանելոց եմ Նորին օգնութեամբն յիտալական լեզուէ ի հայկական բարբառ ... օժանդակութեամբ եւ գոյիւք ... Յօհաննէս Եպիսկոպոսի եւ պատրիարքի մայրաքաղաքին Կոստանդինուպոլսոյ, միջնորդութեամբ Յակոբ աստուածաբան վարդապետի եւ Եպիսկոպոսի՝ աշակերտի նոյնոյ վեհանդուստեր պատրիարքի, ես Ղուկաս Խինին վարդապետ Խարբերդցի ... յորդոքեալ թարգմանիչ նոյնոյ պատրիարքի, Յուին Քրիստոսի 1730 ...»։ Բ Հատորը. «Թարգմանեցեալ ըստ խնդրոյ եւ օժանդակութեամբ Յօհաննէս վարդապետի Բաղէշացւոյ ... ի Ղուկասու ... վարդապետէ Խարբերդացւոյ ... որոյ աւարտումն եղեւ յամի հազար Յօթն հարիւր երեսուն եւ չորսին»⁽¹¹⁾։

8. — Թովիս Ազուինացի, «Աւսուածաբարնուրին»։ «... եւ թարգմանեցեալ ըստ խնդրոյ եւ յօժանդակութեամբ ... Յօհաննէս վարդապետի Բաղիշեցւոյ՝ պատրիարքի Կոստանդինուպոլսոյ, միջնորդութեամբ Սար-

գիս վարդապետի, աշակերտի իւրոյ Ակնցող, ի Ղուկաս վարդապետէ Խարբերթացւոյ, ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ ... 1734, ի Կոստանդինուպոլիս»⁽¹²⁾։

9. — Անտոնիոս Կոււտին, «Փիլիպոսիալուրին»։ «... սկսեալ եւ աւարտեցաւ թարգմանութիւնն սորին ի լատինական բարբառէ ի հայ լեզու, որ կոչի Գիրք Փիլիպոսիալութեան ... պարունակեալ ի չորս հատորոյ ... արդեամբ, գոյիւք, օժանդակութեամբ Յօհաննէսի ... պատրիարքի Կոստանդինուպոլսոցեցւոյ ... միջնորդութեամբ Սարգսի՝ Նորին աշակերտի ... կեսարիոյ առաջնորդի Ակնցուցոյ ... ձեռամբ անարժան Ղուկասու վարդապետի Խարբերդացւոյ Արքահամեան, ի ժամանակի պատերազմաց Սարգսինոսացւոց ընդդէմ Պարսից եւ Ուռուսաց, ի Կոստանդինուպոլիս, Յուին 1736, Յունիսի ամսոց»⁽¹³⁾։

10. — «Գիրք որ կոչի Էալակավարւրին»։ «... թարգմանեցեալ եղեւ իտալական լեզուէ ի հայոց բարբառ, ի Ղուկասու վարդապետէ Խարբերթացւոյ, ըստ խնդրոյ Յօհաննէսի արհիեպիսկոպոսի Բաղէշեցւոյ եւ Պատրիարքի Կոստանդինուպոլսոց յամի 1740 ... Կոստանդինուպոլիս»⁽¹⁴⁾։

11. — Յակուպ Մարկոսինիոս, «Պարտէկ Հովուաց»։ «... թարգմանեցեալ ի լատին լեզուէ ի հայ բարբառ ի Ղուկայ վարդապետէ Խարբերդացւոյ, հրամանաւ Յովհաննու գրասէր եւ աշակերտաշատ պատրիարքի Կոստանդինուպոլսոց. որ Կոլոսոն անուանէր»⁽¹⁵⁾։

Թարգմանական աշխատանքների այս նոյն ընթացքը Խարխաւաւում և առաջ էր մշտում նաև Յովհաննէս Կոլոտիք անմիջական գործակիցների ու աշակերտների

(12) Նորայր Արքեպոս. Պաղարեան, Նշուած աշխատութիւնը, Հատոր Չորրորդ, Երուսաղէմ, 1969, էջ 598.

(13) Նոյնի՛ Հատոր Երրորդ, էջ 79-80: Բառ Համան պատմիքի Վկայութեան Կոլոտիք պատշուերով թարգմանուած են Եղեկնակ ոյյն երկի Եղանակներուն, որ է Լուիֆա, և երկրորդն, որ է Ֆիկրայ։ տե՛ս, Բարգէն Կամոցիկոսի կողման ու նշուած աշխատանքիւնը, էջ 57:

(14) Նոյնի՛ Հատոր Վեցերորդ, 1972, էջ 276:

(15) Բարգէն Կարողիկոս, «Յուցակ Յեղագրաց Զալարիոյ», էջ 139:

(9) Նոյն տեղում, էջ 713-714:

(10) Նոյն տեղում, էջ 2: 4

(11) Նոյն տեղում, էջ 711-714:

կողմից գեռ իր պատրիարքութեան տարիներին ու նրանից յետոյ,

Այդ թարգմանութիւններից են.

1. — Թաղօր Վարանիոյ, «Թամբ Ըսլիուկանք»։ «... Մեծի Պոլսոյ Կոստանդնուու պատրիարքի Բաղիշցեւոյ տեսուն Յօհաննիսի ... աշակերտ Յարութիւն ... վարդապետու ... արքամար իմով ետու զքարուցագիրք զայս թարգմանել ի հայկական բարբառ, որոց թարգմանիչն եղեւ Խարբեթացի Ղուկաս վարդապետն ... թարգմանցաւ զիրքս ԹՁԶ (1731) թուին ...»⁽¹⁶⁾։

Մըւս ժամանակը յաջորդաբար՝ 1736 և 1741 թթ.⁽¹⁷⁾։

2. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնութիւն Խանիկիլու»։ «... եւ անտի իլ լատինականէ, Փ. Ա. Ե թարգմանեցեալ ի հայրաբառ ի Ղուկասու ... վարդապետէ Խարբեթացւոյ, հրամանաւ եւ արդեամբ Ղազարու վարդապետին եւ եպիսկոպոսին Պոնտոսի ի հարազատի տեսուն Յօհաննիսի Պատրիարքին Կոստանդնուուպոլսոյ ... ի թվին Փրկչին 1746»⁽¹⁸⁾։

3. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնութիւն Ժերագարեկից»։ «... ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ, օժանդակութեամբ եւ գոյիւր Յակոր ... Կոստանդնուուպոլսոյ հայոց պատրիարքի յԱկնցուոյ, միջնորդութեամբ փոխանորդ նորին ... Յարութիւն եպիսկոպոսին, թարգմանեցաւ ... Ղուկասու Վարդապետէ Խարբեթացւոյ ... յամի Տեառն 1746 ...»⁽¹⁹⁾։

4. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնութիւն Խօսկեկիլու»։ (Թարգմանչի իսկ ինքնագրով) «... Արդեամբ եւ գոյիւր վեհականութեամբ ... Յակոր ... Պատրիարք Կոստանդնուուպոլսոյ Հայոց ի առաջնորդութեամբ նորին ... Յարութիւն եպիսկոպոսին, թարգմանեցաւ ... Ղուկասու Վարդապետէ Խարբեթացւոյ ... յամի Տեառն 1747 ...»⁽²⁰⁾։

(16) Նոյնի Հատոր Երկրորդ, էջ 620։

(17) Նոյն տեղում, էջ 5, Հատոր Առաջին, էջ 158։

(18) Նոյնի Հատոր Առաջին, էջ 326։

(19) Նոյն տեղում, էջ 126։

(20) Թարգմանական Արքաղիկոս, «Թարգմանք առաջնորդութեամբ Պատրիարք կուպութիւն կամ առաջնորդութեամբ պատրիարքութեամբ»։

5. — «Մեկնութիւն Թղրոցն Պոլսու»։ (Թարգմանչի իսկ ձեռագրով) «... ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ արգնամբ եւ ծախիւր ... Յակոր ... Հայոց Պատրիարքի Կոստանդնուուպոլսոյ միջնորդութեամբ ... փոխանորդի հրոյ Յարութիւն արին եպիսկոպոսի Պալաթացւոյ, թարգմանեցեալ ի Ղուկասու վարդապետէ Խարբեթացւոյ ... յամի Տեառն 1749 ... ի Կոստանդնուուպոլիս»⁽²¹⁾։

6. — «Մեկնութիւն Կուրողիկեաց»։ (Թարգմանչի իսկ ձեռագրով) «... ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ թարգմանեցեալ եղեւ ի Ղուկասու վարդապետէ Խարբեթացւոյ, արգնամբ եւ գոյիւր ... Յակոր ... նախ Պատրիարք Կոստանդնուուպոլսոյ եւ զկնի՝ սրբոյ երուսաղէմի. թարգմանեցեալ ի Կոստանդնուուպոլիս ... յամի Տեառն 1749 ...»⁽²²⁾։

7. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնութիւն Երեմեայ»։ (Թարգմանչի իսկ ձեռագրով) «թարգմանեցաւ ... ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ արգնամբ եւ գոյիւր Յակոր ... նախ պատրիարքի Կոստանդնուուպոլսոյ, արդէն՝ սրբոյ երուսաղէմայ ... ի Ղուկասու վարդապետէ Խարբեթացւոյ ... յամի Տեառն 1750»⁽²³⁾։

8. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնութիւն Խմասութեան (Աղոստոնի)»։ (Թարգմանչի իսկ ձեռագրով) «... թարգմանեցեալ եղեւ արգնամբ եւ գոյիւր ... Յակոր ... Սաղմայ պատրիարքի ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ Խարբեթացի Ղուկասու թարգմանէ, յամի Փրկչին 1751 ...»⁽²⁴⁾։

9. — Թովմա Ագութինացի, «Ալուսուածաւ բանութիւն»։ (Առաջին մաս Մայրագոյն տեղականի Աստուածաբանութեան)։ «... իսկ ի նարդնիս թարգմանեցեալ եղեւ ի լատինական բարբառոյ ի հայկական ըստ խնդրոյ Ղազար արին եւ պանծալի եպիսկոպոսի կուպութիւն առաջնորդութեամբ Պոնտոսուի ... ի Ղուկասու վարդապետէ Խարբեթացւոյ»։

(21) Նոյն տեղում, էջ 59-60։

(22) Նոյն տեղում, էջ 627։

(23) Նոյն տեղում, էջ 50։

(24) Նոյն տեղում, էջ 54։

յամի կինարարին մերոյ 1751, ի Կոստանդնուպօլիս»⁽²⁵⁾:

10. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնուրին Եկեղեցաւելայ». (Թարգմանչի իսկ ձեռագրով) «Տեառն, Տհառն Յակորայ ... Պատրիարքի Կոստանդնուպան մեծի Պոտոյ ... որոյ արդեամբը եւ գոյիւք ի լատինականէ ի հայո թարգմաննցաւ զիրքս ... ի Հուկաս վարդապետէ Թարգմանչէ Խարբերթացւոյ, յամի 1752, իսկ ի մերումս թւում 1201»⁽²⁶⁾:

11. — Կուռնելիոս Ալափիտէ, «Մեկնուրին Եկեղեցաւիկեայ» (Սիրաք, չորս հատոր). (Թարգմանչի իսկ ձեռագրով) «Եամի մարդասէր փրկին 1753 ... արդեամբ եւ գոյիւք ... Տեառն Յակորայ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ ... եւ թարգմանեցեալ եղեւ ի լատինական լեզուէ ի հայկական բարբառ ի Հուկասու վարդապետէ Խարբերթացւոյ ...»⁽²⁷⁾:

Մեր ձեռքի տակ եղած նիւթերը մեզ հնարաւորութիւն տուին Յովհաննէս Կուլոտի և նրա գործակիցների պատուէրով կատարուած թարգմանութիւններից նշելու միայն զերսոյիշեալները, թէն, վստահ ենք, որ դրանք բոլորը չեն, կան և ուրիշներ: Զենք խօսում այս թարգմանութիւնների մասին, որոնք կատարուել էին նախապէս կամ՝ յետոյ նոյն Դուկաս Խարբերդացու և այլոց կողմից: Անհրաժեշտ և օգտակար պիտի լինէր յստակ ուսումնասիրութեան նիւթ դորձնել նաև այս ժամանակաշրջանում (ԺԷ. - ԺԼ. դարեր) կատարուած թարգմանութիւնները, ինչպէս Ունիթուական շըլանի (ԺԷ. - ԺԶ. դարեր) թարգմանութիւնները⁽²⁸⁾, իր դրական և ոչ դրական բոլոր հանգամանքների մէջ:

Այս առիթով կարելի չէ չընդգծել վաստակաշատ Դուկաս Խարբերդացու թարգմանչական ծառայութիւնները, աշխատանքի ապշեցուցիչ ծաւալը, բայց և

(25) Նորայր Արենպու. Պարտեան, ԱՄԱՅՐ ՑՈՒՑ-ԱՌԵ 109,

(26) Թարգմանչառակից Կարպիկոս, «Ճաւացակառագաց Ղաւաթիոյ ...», էջ 54-56.

(27) Նոյն հեղուած, էջ 57:

(28) Տէ՛ս Markus Antonius v. d. Oudenrijn, Linguae Haicaneae Scriptores, Berna, 1900:

չնշել իր բերած լատինարանական անհորդի հեղեղն ու բազմապիսի խաթարութիւնները ժամանակակից հոյերէնի մէջ:

Որոշակի պատմական, ժամանագրուկան և գիտու-մշակութային արժէք են նիրկայացնում այս ժամանակաշրջանում կոստանդնուպոլսում լոյս ընծայուած հրատարակութիւնները⁽²⁹⁾, որոնց ապարագութեալ կողմանը կողմանէ կողմանէ կողմանէ և իր գործակիցների ու յաջորդների ջանքերին: Հայերէն ապագրութիւնը, որ սկիզբ էր առել 1512 թուականին, կոչուած էր հոկտոյական գեր կատարել հայերէն գրքի ու գպրութեան տարածման, Հայ ժողովրդի լուսաւորութեան, ժամանոր նիւթերին հոգեառ կեանքը հարստացնելու և կազմակերպիկու գործում: Տիտանական ջանքերի ու զոհողութիւնների գնով կետնքի կոչուելով, այն լիովին սպասարկեց նաև մեր հասարակուկան գիտակցութեան ու քաղաքական հասունացման թէկուզ սկզբնապէս դանդաղ ընթացքին: Մինչ այս և այս ժամանակաշրջանում եղած յիշեալ հրատարակութիւնները, բնականարար, գրում էին նաև Սկիւտարի Դպրոցի ուսուցիչների և սաների տրամադրութեան տակ, և այստեղ ևս ժամանցում էին իրենց կրթական ու գիտա-մշակութային ծառայութիւնները:

Այսպէս, ժամանագրական, թարգմանական-գրական և տպագրական նման իրագործութիւնների ընթացքում ու միջավայրի մէջ էր շարունակում գործել սոյն դպրոցը թէ Սկիւտարի, թէ, յետագայում, Գում-Գարուի մէջ: Տեղափոխուելով (1741թ.) Գում-Գարու Յակոբ Նալեան բազմավաստակ գիտնական-մատենագիր պատրիարքի միջնորդ, Սկիւտարի գպրոցը շըլաղարձային նոր վիճակ չստացաւ անշուշտ, այլ շարունակեց Սկիւտարեան աւանդներով ընթանալ, նոյն ուսումնագիտական ծրագիրն իրագործել Կնոյն նպաստակին միահիլ, նոյնինքն Յակոբ Նալեան պատրիարքի և Պալտասոսը դպիր նշանաւոր մշակութային գործիչի

(29) Հայ գոլովը Պատմութիւն, Հատուց թ., Երես, 1972, էջ 618-619:

ԳՐԱԴԱՎՈՅՑ

ՕՐԱՅՈՅՑ - 1979

ՊԱՏՐԻԱՐքՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԹՈՒՐՔԻՈՅ
Պատրաստց՝ ՄՈՎԱՅԵՍ Ա. ՔՀ. ԳԱԼԵՆԵՔԻՐԵԱՆ

Վերջերս առիթը ունիցանք աչքէ անցընելու 1979 ամքոյ կ. Պոլսոյ Պատրիարքութեան գրպանի Օրացոյցը, Թժբախտարքը, ինչպէս անցեալ տարիներուն, այս առողուան Օրացոյցը ևս զիրծ չէ թերիներէ ու վրէպներէ: Սխալներ՝ սրոնք նուազելու և ուզդուելու փոխարքէն, տարիներու թաւալումին հետ առաւել ևս կը ճոխանան, Այդ թերիները լրացնելու և այդ վրէպները ուղղելու փորձ մը վստահուած է յետագայ տողերուն:

Աւրեամբ կ'ընենք մեր նկատողութիւնները կարգաւու:

Նախ կը պարմանանք թէ ինչո՞ւ մեր

Տիրոջ պայծառակերպութեան նկարը գրաւածէ Տօնացոյցի բաժինը կանխող էջը: Աւելի լաւ պիտի չըլլա՞ր եթէ Քրիստոսի Ծննդեան նկարը փոխարինէր զայդ:

Էջ 20, Յունուար 5, ձռագալոյց(*)

... ձրագալոյց:

Նոյն էջին, վարէն 5րդ տող, ձառագալութեալ ... Զիանդուրծեալ, քանզի օրը Ուրբաթ է և ոչ Հինգշաբթի:

Էջ 21, վարէն 3րդ տող, Արեգական

... Արեգականն: Նոյն բառը կը գտնենք Էջ 23ի վերջնիթեր տողին վրայ:

Էջ 22, 2րդ տող(**), Տնն: ... Տնն: կամ, աւելի հիշողը, Տեառն (կրծատեալ բառին մօտ միջակէտը անհրաժեշտութիւն մէն է ըստ գերականական օրէնքի, քովը վերջակէտ ըլլայ կամ ոչ: Յետոյ, չ'արժեքը բառ մը կոճատել, անկէ երկու տառ գեղշենով միայն, քանի որ անոնցմէ մէկուն տեղը պիտի գրաւուի միջակէտէն: .

(*) Վետ է ըլլայ բառերը կրկնելու փոխարքն, սիալ և ուղիղ ընթերցումները իրարժէ կանչատենք կախման կէտերով:

(**) Երբ տողին ուրէկ ըլլալէ չէ նշանակուած, պէտք է հաշուել զայն վերէն:

և յայտնի աաղասացի զեկովաբութեամբ: Այսիդ փոխադրուելը աւելի փորձնականն-կազմակերպչական ծրագրի արդիւնք էք. այն աւելի մօտիկ էք Պատրիարքին ու Պատրիարքամինին: Բամարաբ արգիւնք է արձանագրում նաև այստեղ, հասցնելով ուսուցիչ ու գիտնական վարդապետների ստուար մի խումբ, սրոնցից ոմանք աեղագիտուում ու ծառայում են նաև Մայր-Աթոռ Ս. Էջմիածնում, ինչպիսիք են մեծանուն Սիմեոն Երեանցի և Ներսէս Աշտարակցի, նաև՝ Յովսէփ Արզութեան ու Եփրեմ Կաթողիկոսները, Յարութին Բատենցին, Պետրոս Բերթումեանը, Սահակ Ահագինը (կրտսեր), Պետրոս Ղափանցին⁽³⁰⁾, Ակիրատար - Գում - Գարու դպրոցի

ծառայութիւններից օգտուեց ոչ միայն Պալահայութիւնը, մանաւանդ ոչ միայն եկեղեց - Կրօնական տեսակէտից, այլև գաւառների մէջ ապրող ողջ արհմտահայութիւնը, որին հասնում էք թէ կենչ գանի խօսքով (եկեղեցական առաջնորդ Հովհաններ), թէ վերոնշեալ գրական - մշակութային - տպագրական ձեռնարկումներով:

Ամրատլու, Սկիւտար - Գում - Գարու (աւելի յետոյ՝ Արմաշի) դպրոցները յատկապէս Արմեմտահայութեան ողջ ուսումնակրթական, լուսաւորութեան, մատենակրթական, գիտա-մշակութային, ազգային-եկեղեցական կենսքի ամենահարազատ և ամենաարդիւնաւէտ օրբանները հանդիպան:

ՓԱՅԱԿԱ ԱՆԹՎՊԵԱՆ

(Վեց)

(30) Մաղաքիա Արքան: Օրմաննան, ՇԱՀԿԱՊՄԱՆՆԵՐ, Հայութ, 4, Պալիս, 1912, էջ 3037, 19319